ՄԾԵ.

Ցոյն է Ստաւռաքի օղլուն. սա վաստկելով Մուստաֆա Գ.ի համարումը՝ բարձրացած էր իշխանութեան. բայց իր աղետաւոր գործունէութեամբը չարաչար վերջ մը կ'ունենայ, ինչպէս լաւ կը նկարագրուի մեր հետագայ թուղթին մէջ։

Գերապատիւ և գերայարգ տեառն տեառն Ստեփաննոս վարդապետի
և արքայօր մերոյ ողջոյն խոնարհական

... զստաւռաքի օղլուն՝ որ զուլահի և զպուղտանի պէյութիւնսն ի ձեռին ունէր, իբրև գլուխ նոցա կամ իբր երկրորդ թագաւոր ի վերայ նոցա յետ մուստաֆային. որ և ի տէրութեան տանկաց նորանոր մալիքեանէից գտիչ և հնարիչ էր իբր բարերար թագաւորութեանն. որ չնչին սայլանկողին 30 քէսէ միրիի տալ կարգեաց, և զուլահի և զպուղտանի կողմանց ոչխարսն անձին սեփականեաց գնել և վաճառել յանհնարին վնաս և յողբումն հովուաց, որ ի պատճառս կարգադրութեան իւրոյ ի նոյն կողմանս թէ այսչափ միայն լինիցին վաճառականք և ոչ աւելի՝ եւ սպանանել աւելի քան գլխսուն էէնիչէրիս. որ և զցորեանս նոյն կողմանցն ինքն գնէր և վաճառէր յանհնարին կատաղութիւն նաւավարաց. որ խորհէր եւ տալ սահմանել յաւուրս յայսոսիկ զնոր թուղթ հարկի՝ անուանեալ չէլէպի խարաճի, ութն ոսկնոց. որ զինքն և զամենայն ինչս իւր նուիրեալ էր թագաւորին, թէ քո եմ ես և ամենայն ինչ զոր ունիմ, զայն ստաւռաքի օղլուն կալեալ խեղդեցին և կախեցին առաջի տան իւրոյ որ ի յանհաւուտ գեղն. և յետ կողոպտելոյ զպալատին տունն, և զայս տուն յորոյ առաջի կախեցաւ, ի հիմանց քանդեալ կործանեցին զայս զանհաւուտ գեղի տունս, և զմարմին նորա ընկեցին ի ծով, թէպէտ և բազումս աշխատեցաւ կին նորա առնուլ զմարմին նորա. իսկ ի կողմանէ ընչից, ի տանից նորա հանին եօթն հազար քէսէ բստակ. իսկ պատուական և դժուարագիւտ քարանց և ազգի ազգի ընչից և զարդուց չիք չափ որպէս պատմեն գրեթէ որպէս զեաղուպն. և վնասն որոյ վասն կախեցաւ՝ գրեալ և եդեալ ի վերայ կրծոց նորա այս էր՝ թէ վնասապարտ է թագաւորութեանս, զրկիչ և կեղեքիչ մեծի և փոքու որ ի կողմանս ուհլահի և պուղտանի։ Ի քննել և ի յուզել զինչս ստաւռաքի օղլուին գտանեն առ նմա զթէզպէհ մի, զոր ոմանք ասեն կազմեալ յական պատուականաց 700 քէսէնոց, և այլք ի մարգարտէ. զոր ի ճանաչելն ոմանց թէ այս է թէզպէհն սիւլէյմանին, քննեալ հարցանեն ցստաւռաքին թէ ուստի եկն այս ի ձեռս քո, և նա ասէ ի մառոնի մուսայէն... յայնժամ կալեալ զմուսայն, և ստիպեալ ասել զճշմարիտն, պատասխանէ թէ առի ի ճէվահիրճի ալէքսանէն. յայնժամ ապա կալեալ գիշերայն և զճէվահիրճի ալէքսանն քննեն ի վերայ բանիս, իսկ նա պատասխանէ թէ յիրաւի այնպիսի ակունք կամ մարգարիտք մի մի եկեալ են ի ձեռս իմ և վաճառեալ եմ, բայց ոչ երբէք եկն ի ձեռս իմ այնպիսի թէզպէհ կազմեալ, վասն որոյ և չէ իմ բնաւ վաճառել զայնպիսի ինչ. և մինչև ցայժմ երկոքին սոքա են ի կալանս. այլք ասեն թէ ոչ վասն այսր բանի, այլ վասն ունելոյ ընդ ստաւռաքին առևտուրս են սոքա ի կալանս...։ Դարձեալ յաւուրս յայսոսիկ ըմբռնեալ զպատանի մի գեղեցիկ չորեքտասանամեայ, յոյն ազգաւ որդի արայիճիի, և սուտ վկայելով բազմութեան տաճկաց թէ բանս եդ առաջի մեր դառնալ ի տաճկութիւն, և ի չկարելն յաղթել նմա հատանեն զգլուխ նորա ի սեպ. 13...։

1765 *սեպ.* 20 — *Նուաստ ծառայ*

[Կ. Պոլիս] — *Հ. Մեսրոպ Վարդապետ Մխիթարեան*